

ւորին ըսեց թէ՛—Թագաւոր, բէհդին յո՞րի քու հաց կ'կերցու  
ըդոնց:

Ըսեց.—Ըբա ի՞նչ էնինք, վաղեր:

Ըսեց.—Օր մի բերիս մէկ փորձիս ըդոնց, տեսնաս մէջ հու-  
նար կա՞յ, թէ չկա՞յ:

Թագաւոր լէ ըսեց.—Աղէկ կ'ըսիս:

Ու խանչեցին տղեկներ, բերին թագաւորին դիւան:

Ու թագաւոր ըդոնց ըսեց թէ՛—Ո՞րտի, լուսուն պղի կուի-  
էրթանք:

Էդ տեղէն տղեկներ էլան ու գացին նստան ուրանց օթախի մէջ:

Մանցին յարի լուսցաւ:

Լուսուն բերեցին ամէկին մէկ-մէկ ձի տուին, մէկ-մէկ ձեռք  
սիլահ:

Ձիանք հեծան ու գացին մէյդան:

Թագաւոր լէ ուր խոշունով էկաւ:

Թագաւոր վերցուց թէ՛—Սանասար, ըսեց, խոշուն ան դու  
մէկ դէն կայնի. ես, Ասլիմէլիք ու վաղիր մէկ դէն կայնինք:

Սանասար վերցուց թէ՛—Էդմալ չէ, թագաւոր:

Ըսեց.—Ըբա ի՞մալ ա:

Ըսեց.—Ես իմ ախպէր մէկ դէն կ'կայնինք, դու խոշուն մէկ  
դէն:

Ըսեց թէ՛—Քու խօսքն էդնի:

Ու էկան առան իրար կուիւ:

Թագաւոր իշկեց տեսաւ, օր<sup>1)</sup> էլ խոշուն չ'կայ, ըմեն ջար-  
տած էն: Թագաւոր վերցուց թէ՛—Վաղիր, քու տուն աւիրի, իմալ  
օր դու իմ տուն աւիրիր. Աստուած քու տուն աւիրա, ըսեց, չուր  
մկայ էդոնք գինէն մեր մէջ որց մարդ կայ, մկայ իդոնք մարդ ին,  
մենք կնիկ ինք:

1) Բառի սկզբում ուն միշտ է օ է դառնում. օր (որ), օսկի,  
օտ, օխար, օղորմուտն: